

الاتحاد الارمني التقدمي

UNION PROGRESSIVE ARMENIENNE

ՀԱՅ ՅԱՌԱՋԻՄԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

ԾՐԱԳԻՐ ԿԱՆՈՆԱԳԻՐ

062
—
Z - 24

EROS MUL 10

06 JUN 2009

062 ay

الاتحاد الارمني التقدمي 2-24

UNION PROGRESSIVE ARMENIENNE

ՀԱՅ ՅԱՌԱԶԴԻՄԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

ԾՐԱԳԻՐ ԿԱՆՈՆԱԳԻՐ

Խաչիկ

062
062

01 JUN 2013

14493

BOOK MUL 80



8994-56

ՀԱՅ ՅԱՌԱՋԴԴԻՄԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՊԵՅՉՈՒԹ 1939

ՅՕԴ 1. — Հայ Յառաջդիմական Միութեան
նպատակն է.

ա) Ծառայել Սուրբահայ կրթական, մշակու-
թային և հասարակական կեսանքի բարձրացման
երկրի օրէնքներու թոյլատու սահմաններու մէջ;
բ) Ծառայել Հայ ժողովուրդի միութեան և
համեմաշխութեան;

գ) Քաջալերել երիտասարդ մատուրականու-
թինը, հնարաւորութիւններ ստեղծելով անոնց
դորձներու հրատարակման;

դ) Կրթական և առողջապահական օգնութիւն
փութացնել կարօտեալներուն;

ե) Ամրապնդել եզրայրական կապը Հայ և Ա-
րար ժողովուրդներու միջեւ, փոխազարձարար
ձանցնելով անոնց պատմութիւնն ու մշակոյթը;

զ) Հաւատարմութեամբ կատարել Սուրբահական

քաղաքացիի բոլոր պարտականութիւնները :

է) Սուրբահայութիւնը անդեակ պահել Հայուսաւանի մշակութային և տնտեսական կհանքին :

զ) Միութիւնն որևէ քաղաքական նպատակ չի հատապնդեր :

Յ0Դ. 2.— Սուրբահայ Յառաջդիմական Միութեան հասոյթի աղքիւներն են .

ա) Մուտքի նուէրներ և անդամատուրք .

բ) Կենդանութեան եղած զանազան նուիրաւութիւններ .

գ) Հաւաքոյթներէ , ֆիլմերէ , ներկայացումքէ և հանդէաներէ գոյացած մուտքեր :

Գ. ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԻՒՆ :

Յ0Դ. 3.— Սուրբաբնակ ամէն հայ , առանց կուսակցական , սեփ և գաւանանքի խարութեան կրնայ անդամազրուիլ Սուրբահայ Յառաջդիմական Միութեան , եթէ կ'ընդունի անոր ծրագիր-կանոնազիրը և բոլորած 16 է տարիքը :

Յ0Դ. 4.— Որևէ թեկնածու՝ անդամ կ'արձանազրուի 2 հին ընկերներու առաջարկութեամբ և մասնածիզի Վարչութեան մհծամասնութեան հաւանութեամբ :

Յ0Դ. 5.— Անդամներ կընան ըլլալ գործօն և օժանդակ :

Յ0Դ. 6.— Գործօն անդամ կը նկատուին անոնք , որոնք կը վճարեն առնուազն 25 Ա. Դ. մուտք և 120 Ա. Դ. տարեկան անդամատուրք և կը մասնակցին մասնածիզի հերթական բոլոր ժողովներուն : Տարեկան անդամատուրքը կը վճարուի եռամսնայ 4 անդամադիմարով :

ԾԱՆՈՑ.— Փաստուած անզործներ զերծ են մուտքի նուերէ և կը վճարեն տարեկան 60 Ա. Դ. անդամատուրք:

Յ0Դ. 7.— Խերաքանչիւր անդամ պարտաւորէ ունենալ Հ.Յ.Մ.ի անդամակցութեան տեսրը , որ ամեն երկու տարի կը փոխուի և որուն մէջ կ'արձանազրուին անոր անդամատուրքին վճարումները համարձէք զրոյմաթուզիթերով :

Յ0Դ. 8.— Այն անդամը որ 6 ամիս շարունակաբար և առանց յարգելի պատճառի չի վճարեր իր անդամատուրքը , կը բացակացի ժողովներէ և ընթացք չի տար զինքը պարտականութեան հրաւիրող զրաւոր ազդարարութեան , կը դադրի Հ.Յ.Մ.ի անդամ ըլլալէ :

Յ0Դ. 9.— Խերաքանչիւր անդամ պարտաւորէ ժողովրդականացնել Հայ Յառաջդիմական Միութեան նպատակներ և նոր անդամներ ներզրաւել :

Յօդ. 10. — Քուէտրկութեան իրաւունք ուշնին բոլոր անդամները իրենց արձանագրութեանթուականէն սկսեալ, իսկ ընտրուելու իրաւունք ունին անոնք միայն՝ որոնք առ նուազն վեց ամիս առաջ արձանագրուած են և կանոնաւորաբար վճարած իրենց անդամառուքիրը:

Յօդ. 11. — Եթե որևէ անդամ, բանաւոր պատշաճով մը, չուզեր պատկանիլ իր տեղական մասնաճիւղին, ուրիշ մասնաճիւղի մը անդամակցելու համար պէտք է ստանայ իր տեղական մասնաճիւղի հաւանութիւնը, իր պարտականութիւնները կատարած ըլլալը հաստատող վկայագրով մը:

Յօդ. 12. — Օժանդակ անդամներ, Յառաջդիմական Միութիւնը կ'ընդունի և կ'արձանագրէնակ օժանդակ անդամներ, որոնք աարեկան առնուազն 150 ս. դ. կը վճարեն, միանուագ կամ եռամսնայ վճարումով:

Յօդ. 13. — Օժանդակ անդամները պարտաւոր չեն մասնակցելու մասնաճիւղի ընդհանուր անդամական ժողովներուն, գործօն գեր չեն կատարեր և ընտրելու կամ ընտրուելու իրաւունք չունին:

Անոնք կը հրաւիրուին մասնակցելու Հ.Յ.Մ.ի ձեռնարկներուն և ընկերական հաւաքոյթներուն: Անոնց կը արուի օժանդակ անդամի առարկան անդամատեսար:

Ամէն մասնաճիւղ պէտք է պահէ յատուկ տետր մը արձանագրելու համար օժանդակ անդամներու անունը ու հասցէն:

Օժանդակ անդամները իրաւունք ունին Հ.Յ.Մ.ի զարգանիշը կրելու:

Դ. ՄԱՅՆԱՌԻԴՐԻԴ.

Յօդ. 14. — ա) Միութիւն քաղաքի կամ շրջանի մէջ քնակող 7 անդամներ կը կազմին տեղական մասնաճիւղ մը և զայն կ'հնթարկեն կեզր: Վարչութեան վաւերացումին:

Յօդ. 15. — Մասնաճիւղի վարչութիւնը կը նարուի ընդ անդամական ժողովէն և կը վաւերացուի կեզր: Վարչութեան կողմէ վկարչութեան անդամներուն թիւ 3-7 կրնայ ըլլալ:

Վարչութիւնը ինքնիր մէջն կ'ընտրէ ատենապետ, ատենագլիք և գանձապահ: Վարչութիւնը ամէն երկու չաթաթը անդամ մը ժողով կը զումարէ:

Երեք անգամ յաջորդաբար և առանց բանաւոր պատճառի ժողովէն բացակայող վարչական անդամը հրաժարած կը նկատուի :

Վարչութեան պաշտօնավարութեան աեզզութիւնը մէկ տարի է : Անգամները վերընարելի են : Վարչութեան կազմի ամէն փոփսիսութիւն պէտք է ենթարկուի կնդր . Վարչութեան վաւերացումին :

ՅՕԴ. 16. — Մասնաձիւղի վարչութեան պարտականութիւնն է զործագրել վերին մարմիններու (Կեդր . Վարչութեան և անդամական ժողովներու) որոշումները , սարքել հաւաքոյթներ , և հանդէսներ և գասախօսութիւններ , ստեղծել հաւասոյթի նոր ազգի բներ , կանոնաւոր հաշիւ պահել և ամէն երեք ամիսը անգամ կեդրոն ուղարկել իր նիւթական ու բարոյական զործունէութեան տեղեկագիրը՝ և մոււաքի հաշեկշորին հետ միասին :

Իւրաքանչիւր մասնաձիւղի վարչութեան պարտականութիւնն է ուժ տալ Հայ Յառաջիմական Միութեան պրօպականտի զործին և մասնաձիւղի հովանաւորութեան տակ ստեղծել մշակութային , գեղարուեստական , մարզական և լսա-

բան - ընթերցաբանական բաժիններ) միութիւններ): Վարչութիւնները իրաւասու են կատարելու վերոյիշեալ պարտականութիւնները առանց անդամական ժողով զումարելու հարկադրանքի մեջդ Մասին կը ղեկուցանեն հերթական անդամական ժողովին :

ՅՕԴ. 17. — Վարչութեան հրաւէրով երեք անգամ կը զումարուի ընդհ . անդամական ժողով : Իւրաքանչիւր անդամական ժողով կ'ունենայ իր առանձին դիւանը և կը զբաղի ինչպէս վարչութիւններ նոյնպէս և ընդհանուր ժողովի կողմէն առաջադրուած օրակարգերով : Բացառիկ ընդհ . անդամական ժողով կը զումարուի ամէն անդամ որ վարչութիւնը անհրաժեշտ նկատէ և կամ եթէ անդամներու մէկ երրորդը զրաւոր փափաքյայտնէ :

ՅՕԴ. 18. — Ընդհ . անդամական ժողովը օրինաւոր կը համարուի երբ անդամներու կէսէն աւելին անձամբ ներկայ է : Եթէ առաջին ընդհ . անդամական ժողովը մեծամասնութիւն չը դույցնէ , 7—15 օրուան մէջ նոյն օրակարգով հըրաւիրւած երկրորդ անդամական ժողովը օրինաւոր կը նկատուի , երբ կանոնաւոր կերպով իրենց

անդամատուրքը վճարող ընկերներու առ նուազ
զըն մէկ երրորդը անձամբ ներկայ է : Եթէ այս
վերջնագոյն ժողովն ալ չը գոյացնէ մէկ երրորդի
ներկայութիւնը, ժողովը կը ցրուի առանց որոշ-
չում կայացնելու իրաւունքի և կացութիւնը կը
տեղակագրէ կեզր . Վարչութեան : Կը մնայ քննել
ստեղծած կացութեան պատճառները և ձեռք առ-
նել համապատասխան միջոցներ մասնաճի զը զը-
նելու համար բնականոն դրութեան մէջ :

Ներկայյօգուածին արամագրութիւնները պար-
տաւորիչ են վարչութեան և պատգամաւորներու
ընտրութեանց, ինչպէս նաև սկզբունքային կա-
րեւորութիւն ունեցող հարցերու քննութեան հա-
մար հրաւիրուած ընդհանրամական ժողովներու
առթիւ : Հերթական այլ ժողովներու ատեն ըն-
թացիկ հարցերու կարգագրութեան համար, երբ
սառագուիթէ բոլոր անդամներուն անխափի գրա-
ւոր հրաւէր ուղղուած է, կ'արտօնուի ժողովին
ընթացք տալ առանց օրինական մեծամասնու-
թեան հարց բարձրացնելու :

Յ0Դ. 19. — ընդհ. ժողովի հրաւէրները պէտք
է ըլլան գրաւոր և անդամներուն հասնին ժողո-
վի գումարման թուականէն Յօր առաջ :

Ե. ՊԱՏԳԱՅ. ԺՈՂՈՎ.

Յ0Դ. 20. — Հայ Յառաջզիմական Միութեան
օրէնստիր, համառու և գերազոյն մարմինը Պատ-
գամաւորական ժողովնէ որ կը գումարուի երկու
աարին անգամ մը կեզր . Վարչութեան հրաւէրով:
Ոբաւակարդ պատգմ. ժողով կը հրաւիրուի
երբ. կեզր . Վարչութիւնը հարկ տեսնէ և կամ
մասնաճիւզերու կեսեն աւելի պահանջէ :

Յ0Դ. 21. — Առ նուազն ամիս մը առաջ կեզր .
Վարչութիւնը պարաւոր է պատգմ. ժողովին
տեսր, թուականը և օրակարգը հաղորդել մաս-
նաճիւզերուն մասնաւոր շրջաբերականով մը :

Յ0Դ. 22. — Մինչև 50 անդամ ունեցող իւ-
րաքանչիւր մասնաճիւզ մէկ ձայնի իրաւունք
ունի: 51էն 100 անդամ ունեցող մասնաճիւզ մը
երկու, յետոյ իւրաքանչիւր 50 անդամի համար
մէկ ձայն աւելի:

ա) Պատգամաւորները կը նարուին բնդէ . ան-
դամական ժողովին համաձայն Յօդ. 18ի տրա-
մազրութեան :

բ) Պատգամաւոր կրնան ընտրուիլ միայն այն
անդամները որոնք առ նուազն 6 ամիս պարտա-
ձանաչ անդամ եղած են և երեք ամիս զանուած
են նոյն մասնաճիւզին մէջ :

գ) Դուրսէն ընտրւող պատգամաւորը պէտք է անդամ ըլլայ Հ. Յ. Մ. ի ոհէ մասնաճիւղին:

դ) Խրաքանչիւր պատգամաւոր մէկ ձայն միւայն կրնայ ունենալ:

ԾԱՆՈԹ.— Ոչ մէկ պարագայի բոյլ չի տրուիր պատգամաւորի մը ներկայանալ մէկ է աւելի ձայնով:

ե) Մէկէ աւելի ձայն ունեցոյ պատգամաւոր պարտաւոր է զայն փոխանձել կազմակերպութեան ուրիշ մէկ անդամի մը, համաձայն իր ունեցած լիազօրագրի տրամադրութեան եւ Կեդր. Վարչութեան կամ պատզմ. ժողովի դիւանի հաւանութեամբ:

զ) Կեդր. Վարչութեան անդամները կրնան թերուիլ պատգամաւոր, պայմանաւ որ կեդրոնի անդամ պատգամաւորները չը մասնակցին Կեդր. Վարչութեան բարօյական ու նիւթական հաւետութեան մասին եղած բանաձեւերու բուեարկութեան:

ՅՕԴ. 23.— Պատգմ. ժողովը օրինաւոր կը համարուի երբ իրենց օրինական հանդամանքը պահող մասնաճիւղերու և ձայներու կէսէն աւելին ներկայացած է:

ՅՕԴ. 24.— Պատգամաւորական ժողովը՝
ա) կը լսէ Կեդր. Վարչութեան բարօյական և

նիւթական հաշուեառութիւնը և իր գնահատան-քը կ'ընէ:

բ) Կ'ընտրէ երեք հոգիէ բազկացած «Կեդր. Վերահսկիչ Յանձնաժողով»:

գ) Կը քննէ Կեդր. Վերահսկիչ Յանձնաժողովի կողմէն ներկայացած պիւամէն, կը զծէ զայն և կուտայ նոր հրահանգներ:

դ) Եթէ հարկ տեսնէ փոփոխութեան կ'ենթարկէ ծրագիր-կանոնագրի յօդուածները:

ե) Գաղտնի քուէարկութեամբ և ձայներու մեծամասնութեամբ կ'ընտրէ նոր Կեդր. Վարչութիւն որ պատասխանատու է Պատգմ. Ժողովին:

Զ. Կեդր. ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՅՕԴ. 25.— Կեդր. Վարչութիւնը, որու կեդրունն է Պէյրութ, երկու Պատգմ. Ժողովներու միջև ինկած ժամանակաշրջանին Հայ Յառաջդիմական Միութեան վերին պատասխանատու մարմինն է և կը վայելէ համապատասխան իրաւասութիւններ,

ՅՕԴ. 26.— Հ.Յ.Մ. ի բոլոր մասնաճիւղերը ուղղակիօրէն կապուած են Կեդր. Վարչութեան և անոր ենթակայ:

ՅՕԴ. 27.— Կեդր. Վարչութիւնը կը բաղկանայ 5—9 անդամներէ և 3 թեկնածուներէ:

կեզր . Վարչութեան անդամ կրնան թլլալ առնոնք միայն որ տո նուազն մէկ տարի գանձւած են կազմակերպութեան մէջ և իրենց գործունէութեամբ փաստը ցոյց տուած են վերին դեկավարութեան անդամակցութեան արժանիքի :

ՅՕՒ . 28. — Կեզր . Վարչութեան անդամները վերընարելի են : Երբ կեզր . Վարչութեան անդամները կը պակախն (հրաժարումով կամ հեռացումով) անոնց տեղ պաշտօնի կը կոչուին համագումարէն ընտրուած թեկնածուները իրենց ստացած առաւելագոյն քւէի կարգով :

ՅՕՒ . 29. — Կեզր . Վարչութիւնը իր մէջէն կ'ընտրէ զիւան բազկացած նախագահէ , փոխնախագահէ , վարիչէ-քարառուզարէ , գանձագահէ և մէկ խորհրդական անդամէ :

Դիւանը նիստ կը գումարէ չարաթը անդամմը , կը վարէ վարչական բոլոր գործերը , կը պատրաստէ վարչութեան օրակարգերը և անոնց մասին իր առաջարկներն ու տեսակէտները կը բանաձեէ նախագէս :

Կեզր . Վարչութիւնը նիստ կը գումարէ առնուազն երեք ամիսը անդամմը :

ՅՕՒ . 30. — Կեզր . Վարչութեան նիստը օրինաւոր կը համարուի , երբ անդամներու մե-

ծամասնութիւնը ներկայ է :

ՅՕՒ . 31. — Կեզր . Վարչութեան պարագաւանութիւնն է զեկավարել Հ.Յ.Մ.ի ընդհ . գործունէութիւնը , անոր նպատակը իրականացնելու համար հարկ եղած աշխատանքը ի գործ գնել , հսկել մասնաճիշգերու գործունէութեան վրայ , հրահանգներ և ցուցմունքներ տալ , վաւերացնել մասնաճիշգերու վարչութեանց ընտրութիւններն ու որոշումները , ըրջաբերականներով ու նախաճկներով միշտ կապ պահել մասնաճիշգերու հետ և ներկայացնել կեզր . Վարչութեան որոշումները առ ի գործադրութիւն :

ՅՕՒ . 32. — Կեզր . Վարչութիւնը իրաւասուէ , անկախ ներքին կանոնագրութեամբնախատեսուած ժամանակամիջներէն , մասնաճիշգերէն հաջուեալուութիւն պահանջելու երբ ինքը անհրաժեշտ գատէ :

ՅՕՒ . 33. — Կեզր . Վարչութիւնը Հ.Յ.Մ.ի մասնաճիշգերու բոլոր հասոյթները կը կեզրուցնէ իր գանձին մէջ :

Որեէ մասնաճիշգ իր ընդհ . հասոյթներուն առ առաւելն 25 առ հարիւրը միայն կրնայ տեղական ծախքերուն յատկացնել : Որեէ մասնաճիշգ իր գանձին մէջ երեք ամսոււա հասոյթէն

տւելի չի կրնար պահել:

Յօդ. 34. — Կեզր. Վարչութիւնը կրնայ կախսակայել և արտաքսել այն անդամները և լուծձել այն վարչութիւնները որոնք գէմ կ'երթան ներկայ կանոնագրի արամագրութիւններուն: Երբ հարկ տեսնէ միջոցներ ձեռք կ'առնէ և առժամնեայ կարգադրութիւններ կ'ընէ Հ.Յ.Մ.ի ներգաշնակ և կանոնաւոր գործունէութիւնը ապահովելու համար:

ԾԱԽՆԹ. — Ծայրանեղ պարագային Կելորնեական Վարչութիւնը իրաւասու է նոյն իսկ լուծելու անկարգապան մասնակիւլ մը:

Է. կեդր. ՎերԱ.ՀԱԿԻՉ ՅԱԽՆԱԺՈՂՈՎ.

Յօդ. 35. — Կեզր. Վերահսկիչ Յանձնաժողովը երկու պատգամաւորական ժողովներու միջև ինչ կած ժամանակաշրջանին պարտաւոր է կեզր. Վարչութեան նիւթական հաշիւնները պարբերաբար ստուգել, արձանագրել և յառաջիկա պատգմ. ժողովին տալ զրաւոր գեկուցում կեզր. Վարչութեան երկամեայ նիւթական գործունէութեան մասին: (Կեզր. Վերահսկիչ՝ Յանձնաժողովին զեկուցման հիման վրայ է որ պատգմ. ժողովը կ'ընէ իր գնահատականը կեզր. Վարչութեան նիւթական գործունէութեան մասին):

Յօդ. 36. — Կեզր. Վերահսկիչ Յանձնաժողովը կեզր. Վարչութեան հետ միասին կը պատրաստէ կազմակերպութեան տարեկան պիւտածէի նախահաշիւը և կ'ենթարկէ զայն պատգմ. Ժողովի վաւերացումին:

Հ. ՊիխՏՃԵ

Յօդ. 37. — Կեզր. Վարչութեան զրամական գործառնութիւնները կը պարփակուին պիւտածէով նախատեսած սահմաններուն մէջ:

Յօդ. 38. — ընթացիկ և ամփոփ ծախքերու համար կեզր. Վարչութեան գանձապահին արագ դրութեան տակ կը զրաի 3000 Արւր. Դահնեկանի զուժար մը իսկ ընթացիկ ծախքերէ զուրս միացածները կ'ըլլան ֆինանսական Յանձնաժողովի տեղեկագրի հիման վրայ. դիւանի առաջարկութեամբ և կեզր. Վարչութեան վաւերացումին յետոյ:

Յօդ. 39. — Հայ Յառաջդիմական Միութեան գանձը կը պահուի դրամատան մէջ Հ. Յ. Մ.ի անունով: Դրամատան հետ գործառնութիւնները կը կատարուին վարչութեան կողմէ լիազօրուած երկու անդամներու կողմէ հաւաքարար և ի պաշտօնէ, որոնք կը ստորագրեն հետեւեալ կերպով Հայ Յառաջդիմական Միութեան կեզրուական Վարչութեան...»:

Յօդ. 40. — Պիւտածէով չը նախատեսուած

ծախքերը կը հոգացաին բացասիկ միջոցներով, Ֆինանսական Յանձնախումբի զեկուցումով և կեղբ . Վարչութեան վաւերացումով:


Յօդ. 41. — Եկեղեց. Վարչութիւնը կրնայ զըստամական օժանդակութիւն ընել իր կողմէ ըստեղծուած յանձնախումբի մը կամ մարմնի մը, Ֆինանսական Յանձնախումբի զեկուցումը լսելէ յետոյ:

Թ. ԱՌԻԾՈՒԽԵՐ

Յօդ. 42. — Հայ Յառաջգիմական Միութիւնը լուծուած կը համարուի երբ իր մասնաճիւղերու թիւը 2էն պակաս է, պարտաճանաչանշ դամներու բնգչ. թիւը 50ի չի հասնիր և մնացող անդամներու երկու երրորդը ցանկութիւն կը յայտնէ հրաւիրել արտակարգ համազումարլուծման որոշումը տալու համար:

Յօդ. 43. — Լուծման ժամանակ Հ.Յ.Մ.ի ունեցած շարժական և անշարժ գոյքը, հնչուն դրամը, ինչպէս նաև արժե թուղթերը կը չկառաջնարկեն հասասատութեան մը:

Յօդ. 44. — Կեղբ. վարչութեան կազմութիւնը, ծրագիր կանոնագրի ամէն փոփոխութիւն, նոր մասնաճիւղերու կազմութիւնը և կազմակերպութեան լուծումը կը տեղեկագրուի Ներգին Գործոց Նախարարութեան:



ՀՀ Ազգային գրադարան



NL0142598

14493

ԳԻՆ 5 Ա.Դ.